Ուրբաթ, 10 դեկտեմբերի, 2010թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 10 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

"Հայաստան" համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող "Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացման նախագծում", և "Հայաստանի Հանրապետության Լոռու Սպիտակ քաղաքի թիվ 2 դպրոցի մարզադահլիճի հենապատի կառուցում" ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող "Ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ" ծրագիրը.

Հայկական Կարմիր խաչի ընկերոնության կողմից իրականացվող "Պետության կարիքների համար տուբերկուլյոզով հիվանդների սոցիալան աջակցության ծառայություններ" ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող "Բարեգործական ճաշարաններ", որի նպատակն է նպաստել սոցիալական լարվածության մեղմացմանը մայրաքաղաքում և հանրապետության այլ քաղաքներում՝ ամենօրյա կալորական տաք կերակուրով ապահովելու միջոցով, "Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ", որի նպատակն է դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին գիտության զարգացմանը նպաստելու համար և "Կրթավճարներ" ծրագրերը:

"Հայկական առագաստանավային սպորտի ֆեդերացիա" հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող սոցիալական ծրագրի մասին, որի նպատակն է առագաստանավային սպորտի զարգացումը ՀՀ-ում, Սևանա լճում նման սպորտով զբաղվել ցանկացողների թվի ավելացում.

"Հայկական Կարիտաս" բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող "Ոռոգման ջրագծի վերանորոգում և թլեկտրական եռաֆազ ենթակայանի տեղադրում Շիրակի մարզի Վարդաքար գյուղում" ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: